Ձեր դեղորայք ստանալու կարգը փոխվելու է:

Եթե օգնության կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել՝
1-800-MEDICARE
Լսողության դժվարություն ունեցողները կարող են զանգահարել՝ 1-877-486-2048 հեռախոսահամարով:
HICAP Խորհրդատուի հետ խոսելու համար զանգահարել՝
1-800-434-0222

2006 թվականի Հունվարի 1-ից սկսած Մեդիքերը կունենա դեղատոմսով դեղորայք ստանալու նոր ծրագիր: Այս նոր ծրագիրը վերաբերվում է բոլոր Մեդի-քալ ունեցողներին, ովքեր ունեն նաև Մեդիքեր: Ձեր դեղատոմսով ստանալիք դեղորայքի մեծ մասի համար կվճարի Մեդիքերը, *և ոչ թե Մեդի-քալը*: Եթե դուք HMO Մեդիքեր ծրագրի մեջ եք, որը ձեզ ապահովում է դեղորայքային նպաստով, ապա դուք կշարունակեք ստանալ ձեր դեղատոմսով դեղորայքը HMO-ի միջոցով: Եթե դուք դեղորայքային նպաստով ապահովող HMO Մեդիքեր ծրագրի մեջ չեք, ապա դուք Նոյեմբերին նամակ կստանաք Մեդիքերից, որտեղ կնշվի ձեր դեղորայքային ծրագրի անունը: Եթե տվյալ ծրագիրը ձեզ դուր չգա, դուք կարող եք ընտրել մեկ ուրիշը: Խոսեք ձեր բժշկի կամ դեղագործի հետ՝ ձեզ ամենահարմար դեղորայքային ծրագիրը ընտրելու համար: Պահպանեք այս և ապագայում ձեր ստացած դեղորայքային նոր ծրագրի մասին այլ նամակները՝ որպես տեղեկատու: Եթե դուք ներկայումս անդամ եք Մեդի-քալի կառավարվող խնամք ծրագրի (Medi-Cal managed care plan) կամ Տարեցների Ամենայն Խնամք Ծրագրի (PACE), ապա դուք ավելի շատ տեղեկություն կստանաք ոչ միայն ձեր առողջապահական ծրագրի կողմից, այլ նաև Կալիֆոռնիայի Նահանգի կողմից: ARMENIAN